ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

Եղեգնատուկ

9

(180)
Սեպտեմբեր, 2021



ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՏԱՐԲԵՐ ԿՈՂՄԵՐԻՑ ԵՆ ԲԱՑՎՈՒՄ ՄԵԾ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ

Շիրակի գրական կյանքը միշտ աշխույժ է եղել և կարողացել է պահպանել ինքնատիպ սերնդայնությունը՝ մշակութային ժառանգորդման կոդով: 80-ականներին գրականություն եկավ մի սերունդ, որ փորձեց կոտրել ավանդական կարծրատիպերը՝ բերելով համարձակ գրականություն:

Սեպտեմբերի 14-ին Գյումրու «Բեռլին» հյուրերի տանը «Մեկ սերունդ, երեք պատուհան» խորագրով հանդիպմանը գրասեր հասարակությունը հաղորդակցվեց այդ սերդի երեք բանաստեղծների գեղարվեստական աշխարհին.

Միքայել Ժամհարյան- «Լքված տան առավոտը»

Ռոզա Հովհաննիսյան-«Արգելակման ճառագայթում»

Գագիկ Սարոյան-«Պարականոն»

Հանդիպմանը ներկա էին ՀԳՄ նախագահ, բանաստեղծ Էդվարդ Միլիտոնյանը, որը գրական վաստակի համար մեդալներ հանձնեց Գագիկ Սարոյանին և Ռոզա Հովհաննիսյանին, իսկ Գյումրու «Բեռլին» հյուրերի տան տնօրեն, Գյումրիում Գերմանիայի պատվո հյուպատոս Ալեքսան Տեր-Մինասյանին տրվեց շնորհակալագիր՝ մշակույթին, ի մասնավորի հայ գրականությանը սատարելու համար:

Գրականագետ, բան. գիտ. թեկնածու Արմեն Ավանեսյանը անդրադարձավ իր խմբագրած գրքերից Մ. Ժամհարյանի «Լքված տան առավոտին», ՀԳՄ Կոտայքի մարզային բաժանմունքի նախագահ, գրող Հակոբ Հարությունը՝ Ռ.Հովհաննիսյանի «Արգելակման ճառագայթումին», իսկ բանախոս՝ գրականագետ, բան. գիտ. թեկնածու Կարինե Մարտիրոսյանը՝ Գ. Սարոյանի «Պարականոն» ժողովածուին:

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը իր խոսքում մասնավորապես ասաց. «Այս հեղինակներից յուրաքանչյուրի հետ հանդիպումը այլ ժամանակներում ենթադրում էր Ոգու խրախճանք, բայց այսօր…»:

«Լքված տան առավոտը» վերահրատարակվել է հեղինակի որդիների և ընկերների աջակցությամբ: Խորհրդանշական է, որ ճիշտ 30 տարի առաջ՝ մոտավորապես այս օրերին, տպագրվեց Մ. Ժամհարյանի հիմնադրած «Եղեգան փող» թերթի առաջին համարը /16 էջով/:

Հատկապես ուզում եմ երախտագիտությունս հայտնել մեր բարեկամ Ա. Տեր-Մինասյանին՝ «Արգելակման ճառագայթում» ժողովածուի հրատարակումը հովանավորելու համար:

Սրտի խոսք ասացին հեղինակների գրչակից ընկերներ Սոնա Անտոնյանը, Հաբեթ Մուրադյանը, Շնորհիկ Շահինյանը, Ռոբերտ Եսայանը, Լուսինե Աղաջանյանը, Սամվել Մարգարյանը /«Շիրակ» թերթի խմբագիր/, էթնոհոգեբան Կարինե Սահակյանը:

Գրական հանդիպման ընթացքում հնչեցին երաժշտական կատարումներ և ընթերցվեցին հեղինակների գործերից:

Շիրակ աշխարհի բանաստեղծության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ մտածողությունը սերնդային է: Գալիս է մի սերունդ՝ նախորդից բացարձակապես տարբերվող, որոնում, գտնում է նախորդ սերնդի կողմից չտրորված տարածքները, ինքնահաստատվում է: Ապրում է այդ տարածքներում Աստծո կանխորոշած իր ժամանակը:

Իր կարոտներով, երազներով ու նվիրումներով է ամբողջանում Հոգևոր Հայրենիքը, որի կրողն է ամեն մի բանաստեղծ: Միտվածություն դեպի հոգի, դեպի ներաշխարհ. ահա այն առանձնահատկությունը, որն առավել բնորոշ է Շիրակի բանաստեղծությանը:

Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Նույն բանաստեղծական սերնդին պատկանելը ենթադրում է նաև նույն արժեքները կրել, նույն ոգեղենության էներգետիկ դաշտում գտնվել և բառի հանդեպ նույն ակնածանքը տածել, որ նկատելի է: Միգուցե հենց այս հանգամանքն է պատճառը, որ նույն սերնդի բանաստեղծներին ընթերցելիս վարպետորեն քողարկված տողերի տակ հարց ու պատասխաններ ես նկատում, մեջլիս կա, որ երբեք պարտվող կողմ ու գրիչը մեկ ուրիշին հանձնելու ավարտը չունի: Ինձ համար Ռոզա Հովհաննիսյանը բառի հաշտարար է, ու նրա բանաստեղծությունները վավերացված հաշտության պայմանագրեր են հիշեցնում: Բանաստեղծուհու գործերում երբեք անհամադրելի բառեր չկան, երկու բառի արանքում ոչ մի պատ ու պարիսպ, ոչ մի խորթություն չկա, երկու մտքերի արանքում սահմանները միշտ բաց են: Ռոզայի մոտ միայն կամուրջներ են, ուր ժամադրված են միմյանց անծանոթ բառեր, որտեղ, պոետական խոսքով, նրանք պսակվում են, բայց ուղարկվում են տուն՝ մեկ բարձի ծերանալու: Մի ողջ գրական մտածողություն կառուցված է հենց այսպիսի ոգու ու մարմնի խաղի հաջորդականությամբ: Ցավի ամեն մի արտահայտություն ընդամենը մեկ տողի լինելություն ունի. բանաստեղծուհին կարծես ընթերցողի նուրբ սրտի համար խոսքով անգամ բեռ չլինելու անխախտ որոշում ունի, որն այնքան էութենական հատկանիշ է…Առհասարակ Ռոզա Հովհաննիսյանի էությունն ընդգծված է իր պոեզիայում. նա կարող է ինչոր սկիզբ տալ պաթոսով՝ բառը կարծես նետելով դեպի երկինք, սակայն այնպես նետել, որ այն վերադառնա ու հոգին ավանդի հողում, հաջորդ գարնանը մեկ այլ բանաստեղծության մեջ ծիլ տալու շրջապտույտի համաձայն: Օրինակ՝ գրում է «Երբ փլվի սիրուս աղավնատունը», բայց շարունակում՝ «Գեղեցիկ մեռնելու օյինս քեզ»… Շատ բանաստեղծներ են իրենց մահը պարպում ընթերցողի սրտում, իրենց սերն անպատասխան թողնողի հոգու վրա էլ ծանր մեղքի տապանաքար դնում, բայց Ռոզան ուրիշ է, նա «Երկրից դուրս կճախրի ամբրոսի վայելքը շուրթերին, մեռնելհառնելու օյինով մի աղջիկ»: Նա մի՛շտ աղջիկ է՝ բառ-աղջիկ, բոցկեզ աղջիկ, ճախրող աղջիկ, տեղանքին անսովոր աղջիկ, փխրամած աղջիկ, աղջիկ պտտահլու ճայ, աղջիկ՝ գիժխոտը կրծքին և այլն: Ռոզա Հովհաննիսյանի և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքն այնքան խաղացկուն է, որ թվում է՝ ընթերցողի հոգում խրախճանք է սկսվում, մարմինը անուշութենեն խուտուտ է գալիս, ու բջիջները պարում են: Զգացողություն կա, թե բանաստեղծուհին իր չարաճճի մատներով խառնշտորում է ընթերցողի գանգուրները, անգամ եթե մարդը վաղուց ճաղատ է: Եվ վերջապես, ինչու է ափսոս Ռոզա Հովհաննիսյանի բանաստեղծական լեզվամտածողությունը. որովհետև այն անհնար է փոխանցել մեկ այլ լեզվով, սա բառ էր, որն ի սկզբանէ է, ու սերում է Բանից, ինչը երբեմն կարող է բուրդ լինել…

Լուսինե ԱՂԱՋԱՆՅԱՆ

Միքայել ԺԱՄՀԱՐՅԱՆ - ԼՔՎԱԾ ՏԱՆ ԱՌԱՎՈՏԸ

Իրարամերժության պարաբոլա՝ վեր-վար, վեր-վար, անսպասելի անձնավորումներ, համադրումներ: Երևի թե ոչ մի այլ հեղինակի մոտ չէի հանդիպել այսքան սրված, պրկված նյարդերի գերագույն լարման:

Գրվածը պիտի որ սիրո ու գարնան մասին լինի, այդպես հավաստում է վերնագիրը, բայց կարդում եմ, ու նրա տողերը կռիվ ու խռովք են ինքն իր հետ ու նաև կյանքի և նույն այդ կյանքի հանգույն էլ խճճող, շփոթեցնող, անակնկալ տրամադրությունների վայրիվերումներ:

Մի քանի անգամ վերընթերցելով փորձում եմ գտնել այնքան խորը պահած տողատակը, և արդյոք հնարավո՞ր է հասնել դրան: Այնուամենայնիվ, երբ ուշադիր ես, գտնում ես նրա բաց տողերը. «Ես գնում եմ այն հավատով, // Որ եղա երգիչը ամայացած հերկերի և լեզուն չմոռացա…»:

Ի՜նչ դժվար է ապրել մարդը, երբ ընտրությունը մահն է: Սակայն գնում է հույսով, որ երբևէ չեն մոռանա իր հոգու ջերմությունը. «Ի՞նչ դժվար է սիրել կյանքը // գեղեցկացնելու համար, // Անծանո՛թ, արևածագին ես կմեռնեմ…»:

Տպավորություն է, թե «Միհերի մենախոսությունը» հենց իր դատապարտված կյանքի մենախոսությունն է.

Ողբացե՛ք ինձ,
Ողբացեք…
Ո՞վ պիտի ողբա անմահությունս,
Ո՞ւմ անեծքն է, որ պիտի ավերի
այս քարերը փակ,
ու եթե հողը չի կարող տանել
ապրելու համար,
թող որ տեր լինի թաղելու համար…

Կամ այլ տեղ.

Կարապնե՛ր, ձեր անմեղությունը
պաշտում եմ ավելի
Եվ չեմ հավատում,
որ մահը լինում է գեղեցիկ…

Նրա պոեզիան ընդմիշտ է, մնայուն, քանզի ամեն ընթերցողի և ամեն ընթերցման հետ կբացվի նորովի:

Արմենուհի ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՍՏԾՈ ԹԵՎԱԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏԻ ՏԱԿ

Գագիկ Սարոյանը՝ անսովոր ու բացառիկ մտածողության տեր բանաստեղծը, հոգու ներսուզումների փետուրով գրում է իր տողը՝ շերտ առ շերտ բացելով հոգեվիճակներ, տարածության մեջ ընդարձակելով հոգու տարածությունը: Նրա ամեն բանաստեղծություն հոգու կտավ է, ուր անսովոր գունախաղով շարունակվում է սիրո դրամատիզմը: Բառերը ներքաշվում են անէության տարածքներ՝ առաջ մղելով ներքին հուզակրակը: «Ի՞նչն է սիրուն էս ձորերում//ծաղկած հոնի՞ն, // Թե՞ ժպիտը// Իմ սիրածի…»: Նայում է բառին, ինչպես հայելու մեջ, և տարածությունը ներկայանում է ազատ հոգեվիճակով… «Հետո շուրթը դրեց քո շուրթերին, //Տեսավ՝ գինու համ էր, // խառնված էր ծառի շվաքներին»: Քնարական հերոսը «Պարականոն» գրքում բնության պես ապրում է ազատ վարքով՝ իր բնույթի հմայքը տարածելով մտերիմ ծառերի նորաբաց ծաղիկներին: «Որքան էլ միայնակ լինի բանաստեղծը,- գրում է գրականագետ Արմեն Ավանեսյանը,- միևնույնն է, նա մոռացել է օտարման թեման: Նա գնում է մեկուսարան, որպեսզի ավելի սիրի մարդուն, մարդուն, ով ամեն պահի մեղանչում է: Օգտագործելով հեղինակային սիմվոլիկան ու պատկերները, բանաստեղծը ընդգծում է հոգու խորքը և ոգու ճախրը…»:

Բանաստեղծության տարածք են մտնում նաև կենսագրության տարրեր. «Ահա սարերը՝ խրամատե վիրակապով…»: Բանաստեղծը անդրադարձել է նաև գաղթի թեմային՝ արտահայտելով հոգու մեծ ցավը. «Ո՞ւր են հեռանում//Այսպես միայնակ,//Այսքան վիատված//Եվ խուճապահար…»:

«Նա, ով մնում է,//չի՞ լքում հոգին այս հայրենիքի…»: Ազատամարտիկ բանաստեղծը հայրենիքի ազատության աստղն է փնտրում ամեն հայի հոգում և գտնելով՝ այդ աստղից կաթած լույսով գրում է իր տողերը. «Տրվի՛ր Ապրումին,// Ինչպես տաճարն է գիշերների մեջ//Իր ստվերները տալիս աստղերին, որ փոխարենը երկնքից լսի//Հիացման կարկաչ և անուշ մրմունջ»:

Գագիկ Սարոյան բանաստեղծը զգում է, թե ինչպես է մոշահավի երգը հասնում Աստծո ականջին: Կանչում է սիրուհուն, որ գա և այդ երգի մեջ փառավորվի: «Թող քո աչքերն էլ պսպղան մոշի հատիկների պես»,- շշնջում է հեռվից: Եվ ըմբռնելով, որ կանգնած է «Աստծո թևաբաց լուսամուտի տակ», երազում է, որ մոշահավերը երգով գովերգեն իր սիրուհուն «պսպղոցի մեջ էս ցողաթափի»: Կինը Գ. Սարոյանի պոեզիայում ներկայանում է բազմազան կերպավորումներով: Կինը գեղեցիկի զգացողության առանցքն է, որին հավելում ու լրացնում են բնության մնացած բոլոր հրաշքները: Կինը իր բլուզի կոճակները քանդել էր//Անփութորեն, որ դիտման// Վավաշոտ քամիները//Զովություն բերեն նրա//Պտղակալած կղզիներին://Իսկ կրծկալը//Ավելորդ ածական էր (գուցեև մակդիր)//Մի անիմաստ մշուշ՝//Իջած անհայտ ծովերի վրա…

Վարպետորեն արված ընդհանրացում է սա, որ ընթերցողին մղում է դեպի հետաքրքրության նոր դաշտ, ուր հեղինակային բացահայտումները գրավչորեն հուզում են. «Փեշը քամին խառներ,// Փեշի տակից շողար//ճերմակ ծունկը նրա//ծնկին նշան լիներ՝// Կարմիր կակաչի պես մատանու ակ»: Քնարական հերոսը ապրում է սիրո իմաստի մեջ՝ կարևորելով անկեղծության լույսը, որ բխում է սիրելիի շարժումներից և բառերից անգամ: «Մի սիրտ գիտեմ երկնքի տակ,//Լազուր համբույր//Անորսալի կարոտի մեջ,//Դաղձոտ շուրթերը չհամբուրած,//Խայտացող ձուկ…»: Սիրո զգացողության մի նոր սահման է հատում հերոսը՝ արտահայտելով հիշողության դաշտում ծնվող պատկերով: Դժվար թե ինձ //Մոռացած լինես,//Մի գիշեր ես հեռված էի//Քո մարմնի արշալույսի բազրիքներին,//Դու այն ժամանակ//Դեռ շուշան էիր:

Հովվերգական քամիները բանաստեղծին տանում են ներշնչանքի անլուր ճանապարհով, որով պեպեններով աղջիկն է այցելում՝ անձրևաբույր ծաղիկների ուղեկցությամբ: Սերն անսանձ է, ուժեղ այնքան, որ աղջկա պեպեններից կարող է բռնկվել կապույտ երկինքը, կանաչ դաշտը՝ վառվել…

Թե ուզում ես մնալ, մնա՛, բայց միշտ, //Վրանիս տակ, ճիշտ է, նեղ է, պատառ,//Պաղ է մի քիչ,// Սակայն հենց որ գրկեմ՝ կտաքանաս,//Ու թե հանկարծ սիրուց//Էս վրանը վառվի,//Չեմ վհատվի բնավ,//Քանզի տուն եմ շինում որձաքարով,//Շենից մի քիչ հեռու,// Սակայն Աստծուն մոտիկ…

Սիրո այս զգացողությունն արտահայտելու համար բանաստեղծը գերադասում է հյուսել մի հեքիաթ, որն իր կենսունակ տարածության մեջ ընդգրկում է սիրո լույսի ողջ բովանդակությունը: Եվ այս հնարքը՝ որպես գրողի ոճի գործուն մաս, առանձնահատուկ է և իր գրավչությամբ՝ անմիջական:

«Անցումներ» շարքում հեղինակն ինքնազննումի նոր տարածություն է մտնում՝ կողքից նայելով իր անցած ճանապարհին, կշռում է ապրած կյանքի էությունն ու նշանակությունը՝ հրաժեշտի հեռավորությունից: Այս ստեղծագործությունն ընկալվում է նաև որպես բանաստեղծի յուրօրինակ կտակ: «Կգա անցման պահը:// Ես կսուզվեմ նրա//անկողմնակալ խորքում// //Որպես մեղեդու հունդ…»: Եվ կհայտնվի երեխան՝ շարունակությունը Տոհմածառի, կգա՝ էջանիշը ձեռին, որ կանգնի երկու աշխարհի միացման (կամ բաժանման) կետում որպես ապրող երազ: Ստեղծագործության հերոսը սթափվում է նոր տարածության տատանումներում՝ ըմբռնելով, որ իր ունեցածը (կյանքը, հարազատները, գործը) նոր իմաստ է ստանում: «Կգա անցման պահը://Հեռվում կխշխշա//Զավակներիդ սերը,// Իսկ ավելի հեռվից//Ծնողներդ կգան//Գարնան դռների դեմ…»: Բնությունն անգամ ներկայացնում է իր չերևացող ու նոր խորքերով. «Անուշ շնկշնկոցից // Ծառը կթպրտա //Ցամաք նետված ձկան աչքերի մեջ…»: Բայց դեռևս առջևում է ինքնահանդիպման և ինքնաճանաչման նոր Պահը, որը պիտի դիմավորի բանաստեղծին հարցով. «Այսքան վիշտ ու խնդում //Վերապրելուց հետո //Դու կտեսնես հոգիդ, //Դու կտեսնես անոր://Կճանաչե՞ս արդյոք…»: Հրաժեշտի հեռավորությունից բանաստեղծը կկատարի ևս մի բացահայտում՝ կզգա ժամանակը՝ «Որպես թոշնող ծաղկի //Անդնդախոր բուրմունք…»:

«Անցումներ» շարքը Գագիկ Սարոյանի ստեղծագործությունների գլուխգործոցն է, գրված ոգեղեն լույսի հրայրքով: Իր նեռաշխարհային հարուստ խորքով, մտքի ու զգացմունքի շիկացման տարածքով Ոգու այս համանվագը պոեմային շնչառություն ունի:

Ճշմարիտ է ասված. «Գագիկ Սարոյանի պատկերները քողարկված են, սակայն բացահայտման միտված: Այդ բացահայտման հաճույքը տրված է միայն ընթերցողին, քանզի յուրաքանչյուր ոք իր պատկերացումներով ինքնին մասնակցում է բանաստեղծության վերջնական կայացմանը»:

Ռոբերտ ԵՍԱՅԱՆ

Երեք պոետ, երեք աշխարհ…

Մեծ ու փոքր աշխարհ՝ տեղատվություններով, փոթորիկներով՝ փակ ու բաց աշխարհներ: Բաց ու փակ, զգայուն, պինդ աշխարհներ, տարբեր ու գուցե նման, նման ինչո՞ւ, որովհետև նրանք քայլում են պոեզիայի մեծ ու անկրկնելի ճանապարհով, ամեն մեկն իր ուղին բացած, յուրօրինակ հունով, կյանքի իմաստասիրությամբ և բառի իրեն հատուկ նշխարատուփով…

Ողջույնս պոետներին՝ Ռոզա Հովհաննիսյանին, Գագիկ Սարոյանին և խոնարհումս Միքայել Ժամհարյանին:

Զրույցս շարունակում եմ Ռոզա Հովհաննիսյանի բանաստեղծության, նրա տեսակի եթե ոչ խորքին, ապա եզերքին դիպչելով:

Բառերի շրխկոցով, ապրումի խտությամբ, ինչպես կրակ կտրած ձի, գալիս է Նա՝ Բառ աղջիկը՝ ուժի սահմաններով: Ինչ-որ մեկը պետք է վերադառնա անվանակոչելու այս իրերը և ձեռք պարզելու ձևերին ճերմակած. թեև դիմագծեր են սևի վրա, բայց թանձր ու թափանցիկ է սևը՝ դարձյալ բառերի առկայծումով, ապրումը գողունի և խորունկ թաքցրած գալիս է, գնում է, տանում է մինչև երանելի խորքեր՝ արձակ շռայլումներով նեղ դռնով ի վեր, նեղ դռնո՞վ… դեպի լայնահուն հիացումներ՝ փշին հաղթած, օտար վարդ չճանաչած փշին…

Եվ որքան մեծանում է վարդը արարումի, նույնքան զգոն, վերծիգ են բառերը, նույնքան գայթակղող՝ ձգվելու, ելնելու, տանելու հույզերի ելարանով, կրքերի ելարանով բանաստեղծի փոքրիկ խրճիթը, որտեղ անպաճույճ է ապրումը: Ահա այսպես դիտում ես նրան:

Սոնա ԱՆՏՈՆՅԱՆ

Տերևի պես պաղ է շրթունքն
աղջամուղջի,
Ասուպների լուռ շքերթ է երկնքում
բաց,
Հիմա, հիմա կբոցկլտա կիրքը
հանգած,
Ու զայրույթը լեռան կրծքից
դուրս կփախչի:

Բացվող օրը խոլ վրեժի
հանդերձներով
Կքլտքլտա երակներում արյան
հանգույն,
Էլ չենք հաշվի, թե արդյոք ե՞րբ
այսքան թանկ ու
Էժան կյանքը եկավ-լցրեց տեղը
սիրո:

Ու կզարթնի՛, կմոլեգնի
ծանր քամին,
Կգա՛, կավլի՛ երակների
անտարբերը,
Դատարկ տեղը կմխրճեն
Ոխն ու Սերը,
Այն սանիտար, մեր սրտերը
վաղո՛ւց-վաղո՛ւց լքած քամին…

***

Ես հետադարձ հասցե խնդրեցի
թռչունից,
Երբ ամբողջ մի օր
Խոսել էի նրա հետ ազատության
մասին
Ու մտերմացել:

Նա մի պահ չհասկացավ ինձ:
Երբ բացատրեցի,
թե ինչ է հետադարձ հասցեն-
Քահ-քահ ծիծաղեց և ասաց,
Որ ամբողջ պարտեզն է իր տունը,
Որ կողքի պարտեզը, կողքինի
կողքինը ևս իրենն է,
Որ ամբողջ աշխարհն է իրենը,
Եվ իր թևերն են գծում
Սահմաններն ազատության:

Հեռանալիս խղճահարված մի
հայացք նետեց ինձ.
Մի հայացք,
Որի վրա գրված էր Ազատություն…

***

Դաշտերի մեջ սիրո
ես պառկել եմ անձայն,
Մեկ-մեկ վեր եմ թռչում
Իմ իսկ սրտի դողից
Ու աչքերս եմ հառում
մութ երկնքին այնքան,
Որ ծղոտն է պոկվում,
Ընկնում Հարդագողից:

Մի թռչուն է ճանկում ծղոտն իր
կտուցով
Ու այնպես է հրճվում,
Ասես աստղ է կտցել,
Իմ ժպիտի փայլը՝ դաշտի աչքին
մի ցող,
Ծիածանի երգն է շրջագծել:

***

Հանկարծ նկատեցի՝
Ինչպես գետինը բարձրացավ
ոտնաթաթերին,
Որ մի կապույտ կում անի
երկնքից:

Հետո հասկացավ,
Որ դա գրեթե անհնար է,
Հուսահատված՝
Սարդեր արձակեց երկինք,
Որ կապույտ իջեցնեն-
Հազար ու մի սարդեր իր հինավուրց հիշողությունից:

Հետո ես վեր նայեցի
ու զարմացա.
Այնտեղ ոչ մի սարդոստայն չկար:

Իհարկե…
Թռչունները չեն թողնում,
Որ ինչ-որ մեկը
Սարդոստայն գործի երկնքում:

***

Այս կողմերով
Մարմնավաճառ է անցել
երկրաչափական մարմինների,
Ամենուր թափթփված բուրգեր են,
Գլաններ, գնդեր…
Իսկ ես մահվանից հետո
Չգիտեմ՝ որտեղ տեղավորեմ
հոգիս:

Գունդը, սովորության համաձայն,
Թեթև քամուց կգլորվի,
Կիջնի ամենացածր
տարածքները-
Մինչդեռ թևավոր հոգիս Երկինք է
երազում:
Պրիզման մի տեսակ ճամպրուկ է
հիշեցնում՝
Խորհրդանիշը ճամփորդության-
Իսկ ես ուզում եմ պահել հոգիս
այս կողմերում,
Որքան հնարավոր է:

«Բո՜ւրգը… բո՜ւրգը…»,-
հանկարծ լսեցի
ժամանակի խռպոտ
շնչառության միջից:
-Իհարկե, բո՛ւրգը,- ուրախացած
բացականչեցի ես
Եվ վերցնելով ամենամեծ բուրգը,
Տեղավորեցի հոգիս այնտեղ:

Իսկ հայացքս չոքեց ու քարացավ
նրա դիմաց…

***

Ճակատագիրը մոտենում է
հետևից՝
Ոտնաթաթերի վրա-
Տեսնես ի՞նչ ունի ասելու,
Որ վախենում է ուղիղ նայել
աչքերիդ մեջ:

Ճակատագիրն արագ է շնչում…
Ճակատագիրն շտապում է:
Այն ակնապիշ նայում է ծոծրակիդ՝
Նշանառուի պես:

Դու ավելի ես արագացնում
քայլերդ,
Բայց կարմիր կետը հետզհետե
մգանում է,
Հետզհետե ավելի լսելի է դառնում
շնչառությունը:

Հետո՝ մինչ սայթաքելդ,
Մի բան է պոկվում ճակատիցդ,
Ընկնում գետնին՝
Երկու թվերի և նրանց միջև
գծիկի տեսքով…

***

Ձեփյուռն է այս կողմերն
ինձ բերել
(Հարցրու զեփյուռին՝
նա կասի…),
Ես գիտեմ՝
Այստեղի լեզուն է հավքերեն,
Ջուրը՝ պաղ, և օդն է անբասիր:

Խոնջացած լուսինն է երբ իջնում,
Երբ այգը բացում է աչքը թաց,
Շշուկով
Լույսերի ծվեններն են խոսում,
Ու սերերն՝ ամենուր թաքնված:

Սիրում եմ այդ պահի տևելը
(Չգիտեմ՝ որքա՛ն եմ արժանի…),
Բայց երբ լույսն է փռում
Կարապի թևերը,
Իմ սիրտը երգում է այդ ժամին…

***

Հիշողության ծառից թափվող
տերևները
Կնիքների նման մեխվում են թաց
գետնին,
Ծամածռվող օրը ասես երազ է
հին
(Աշուն է, խեղդ-աշուն)…

Հավատի արևը նվաղում է
կամաց,
Զարկերակը հույսի սկսում է
ննջել,
Պաղ քամին է բերում բառերի
սև փնջեր…

Պաղ քամին է գալիս-անցնում
հոգուս միջով
Եվ ոտնակոխ անում կրունկներով
իր սուր,
Այս ի՞նչ երգ է հնչում
այսքան օտար ու չոր,
Եվ ո՞ւմ ունկն է ծեծում այսպես
իզուր…

Անձրևող ծառի տրեևներն են
խշշում-
Աշուն է, խեղդ-աշուն…

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

***

Վերցրու:
Լռությանս վրայից քարը վերցրու-
Թող զգամ տարածության
շնչառությունը:
Թող ասեմ թղթից պատրաստված
ճշմարտության մասին,
Ու ձայնս արձագանքվի
Յոթ գոմշի կաշիներով ծածկված
ականջներում:

Վերցրո՛ւ քարը լռությանս վրայից,
Որ ասեմ,
Եվ խոսքիս նշտարը հեռացնի
Ուռուցքն անտարբերության:
Օրեցօր ավելի աճող ուռուցքն
անտարբերության:

Բարձրաձայնեմ,
Եվ խոսքս պոկի
Հայելիները փակող շիրմաները
Եվ այս դատարկը…
Այս դատարկը, որ անընդհատ
լցվում է ոտքերիս տակ…

Այս անդունդը…

ԿՅԱՆՔ՝ ԱՆՃԱՆԱՉԵԼԻ ԱԿՆԹԱՐԹԸ

Ես ճանաչում եմ անհիշելի ժամանակների հիշողությունը, սակայն չունեմ բառեր:

Մ.Դերանց

ԲՆԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ, ԲԱՅՑ ԱՊՐՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գյումրի քաղաքի օրը՝ սեպտեմբերի 18-ին, Շիրակի մարզային գրադարանում տեղի ունեցավ հանդիպում ծնունդով ստեփանակերտցի, բայց Ամերիկայում ապրող արձակագիր, մշակութային գործիչ, Հայաստանի և Արցախի գրողների միության անդամ ՄԱՐԳԱՐԻՏ ԴԵՐԱՆՑԻ հետ:

Հեղինակը մինչ հանդիպումը եղավ ստեղծարար քաղաքի Սբ Յոթվերք ու Սբ Ամենափրկիչ եկեղեցիներում, հուզիչ տպավորությամբ շրջեց Վարպետաց փողոցում, այցելեց Հովի. Շիրազի տուն-թանգարան, ապա և՝ Աբովյան փողոցում գտնվող Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ:

Գրական հանդիպման ընթացքում ծավալվեց երկխոսություն շիրակցի գրողների և նրա միջև: Գրչընկերներն անդրադարձան հեղինակի տարբեր ստեղծագործություններին՝ նշելով նրա արձակի ու հերոսների կերպավորման հնարների առանձնահատկությունները:

Մարգարիտ Դերանցը սիրով պատասխանեց ներկաների հարցերին՝ խոսելով նաև իր ստեղծագործական մտահղացքի մասին, ապա ՀԳՄ մարզային բաժանմունքին ու գրադարանին հանձնեց իր գրքերից:

Ընթերցողներին ենք ներկայացնում Կարինե Մարտիրոսյանի գրականագիտական վերլուծությունը Մարգարիտ Դերանցի «Քրտնաճուկը» ժողովածուի մասին:

Առանձնահատուկ նրբանկատությամբ Դերանցը կարողանում է քննել երևույթների նաև հոգեբանական խորքը և նույն պահին էլ ստանում պատասխանը սեփական, բայց առաջին հերթին, մեծ հաշվով, կանացի հարցերի՝ ճակատագրորեն թե գենետիկ հիշողությամբ, կնոջական երջանկությանն առնչվող բազում հարցեր, որոնք ակունքում գուցե միայն նույն կանացի ներքին աչքն ու մտածելակերպը, հոգեբանությունն ու երևույթները այլ դիտակետից գնահատելու՝ միակ պատճառն ունեն: Ինչո՞ւ են կանայք այսպիսին, և ինչո՞ւ են տղամարդիկ այսպիսին:

Այր-կին հարաբերությունների ամբողջ գունապնակը՝ ցավից մինչև ցավ՝ տոհմական անեծքով արդարացված: Ինչպե՞ս կարող է վերուստ տրված տաղանդն ու շնորհը այդպես դյուրին ու խոնարհ ենթարկվել մարդկային, այս պարագայում՝ տղամարդկային թուլություններին, իսկ հերոսի ինքնարդարացում-պատասխանների դեպքում՝ գուցե հակառակը՝ ադամորդու մարդկային թուլությունը նահանջում է՝ «տեղը զիջելով ստեղծագործելու հափշտակությանը», այն դեպքում, երբ ժողովածուի մեկ այլ հերոսի համար մարդկային թուլությունն ամեն ինչից ուժեղ է գտնվում: Փորփրելով սեփական ներսը՝ հերոսուհին բացահայտում է կանացի ես-ն ամբողջության մեջ՝ կնոջական բազում ճակատագրեր ենթարկելով արդեն գտնված օրինաչափությանը:

Մեկ այլ դեպքում «կյանքի հատակում հայտնված» «երջանիկ» մարդու ապրումներն են՝ կրկին հոգեբանական նրբագծումներով, արձակագրի հայ գրչին բնորոշ նաև խոսուն հավելումներով. «Կուզեի, որ պատմությունս վերջանար հայկական հեքիաթի պես. տղան, հացթուխի կինը, ծավեր աչքերով աղջիկը հասան իրենց մուրազին, և երկնքից երեք խնձոր ընկավ, բայց...»: Խևի «աստեղային ժամը» ամբողջ կյանքում, անգամ իրեն անհայտ՝ գենետիկ հիշողությամբ՝ թե՛ նյութապես, թե՛ հոգեպես աղքատությունն ընդգծվում է ամենուր. սեփական ընտանիքում արհամարհվածը իրեն շոյված է զգում թեկուզ իր ծերբակալումը դիտողների անմեկնելի հետաքրքրությունից: Սա ևս տեսակի հոգեբանություն է, որ ուրույն տեղ է գրավում հեղինակի՝ մարդկային ճակատագրերի ընդգրկուն բացահայտումներում:

«Նա ապրում էր կոտրելով բարակ այն անջրպետը, որը իրականությունն է բաժանում ցնորքների աշխարհից: Տեսիլքներում հայրը կենդանի էր մշտապես»:

Ահա մարդու մեկ այլ տեսակ՝ մշտապես՝ անկախ վերջինիս գոյության հանգամանքից, հոր հանդեպ սիրով՝ նարնջագույն հեքիաթում ապրող, երբ «Իրականություն չկա: Իրականությունն աներևույթի մեջ է»: Այստեղից սկսած կամ այստեղ հասնելով՝ ևս մեկ քայլ, և կործանում՝ կարմիր հրաժեշտով արևի՝ գեղարվեստորեն ընդգրկուն պատկեր՝ լի բազում անպատասխան մնացած հարցերով:

Անկախ ազգային պատկանելությունից, դավանանքից, սեռից, հատակում թե բարձունքին՝ տաղանդի բարձրակետին հայտնված մարդիկ են ժողովածուի հերոսները՝ յուրաքանչյուրն իր ապրումներով, կյանքի նկատմամբ ունեցած հայացքով և կյանքից ստացած վերաբերմունքով: «Քրտնաճուկ»՝ հոգու և մարմնի մաքրման հնդկական ծես՝ գուցե խորթ ընթերցողի մտածելակերպին: Մի դեպքում գրողն ինքն է բացահայտում կանացի հոգեբանական գծերը, մեկ այլ դեպքում՝ նրա հերոսը՝ այս պարագայում բժիշկը՝ անազատության պայմաններում հայտնվածների ներաշխարհը բացահայտելու փորձով. «Օ՜, մարդկային սիրտ, քո երազանքը սերն է ու քնքշության վայելքը: Այնինչ մեղքը հայտնվում է այնտեղ, ուր իղձերն են բանտարկյալ...»: Եվ «Մի՞թե սա կարող է լինել մարդու կյանքը: Մի քանի բառ, որ շպրտում են հետմահու՝ իբրև վերջին վկայություն»:

Եվս մեկ ճակատագիր, այս անգամ համաձայն բնության տարօրինակ մի երևույթի՝ երբ ակվարիումում ձկները սթրեսից փոխում են ոչ միայն գույնը, այլև սեռը: Ընդամենը մեկ տողով արդեն ամեն ինչ ասված է, երբ մանավանդ գաղութն էլ ակվարիումային կյանք է հիշեցնում: Շնչառության մեկ ամբողջական փուլի արդյունքում՝ ներշնչանքում զուգահեռ հարթություններում՝ բժիշկ-բուժքույր-բանտարկյալ՝ արդեն միմյանց հյուսված ճակատագրական մի բան է ներդրվում, որ հաջորդիվ՝ խոր արտաշնչումով դուրս է մղվում ներքին մի ծկլթոցով՝ այս անգամ արդեն առանձին-առանձին՝ բժիշկը, բանտարկյալը, բուժքույրը՝ յուրաքանչյուրը մենակ մնալով իր ապրումների, զգացումների, ի վերջո, իրենց ներսով սնվող հրեշտակների ու դևերի հետ:

Հեղինակն առանձին կարևորությամբ է շեշտում իր հերոսների, բնականաբար, իրական կյանքում նաև, կապը ժառանգականության հետ՝ լինի դա աղքատության ու հարստության, երջանկության ու դժբախտության անեծքի հետ կապված, այն է՝ «թափ տալ» գերդաստանի տոհմածառը՝ գտնելու հարցերի փնտրվող պատասխանները: Ժառանգական է անգամ Մեծ ցավի հիշողությունը: Արյան ձայն՝ հետադարձ կապի ուժով:

Ի վերջո, ամբողջ ժողովածուում խստորեն ընդգծված ժառանգականության գործոնն իր լրումին է հասնում «Ջրահարսի անեծքը» էսսեում՝ կյանքի անճանաչելի ու անվերծանելի առեղծվածների իրական նկարագրությամբ. «Ես ճանաչում եմ անհիշելի ժամանակների հիշողությունը, սակայն չունեմ բառեր...»:

Երբեմն խոսուն լռությամբ, երբեմն նրբին հումորով գրողը խոսքը հասցնում է գագաթնակետին: «Գլենդելյան բակում» միայն մեկ բնակիչ է խուսափել սարսափելի միջատների ընկերակցությունից, ինչո՞ւ, մաքրակենցա՞ղ է: Գուցե: Անսպասելի լուծումներով, հարաբերականության ինչ-որ դեռևս չհայտնաբերված տեսության համաձայն՝ միջատները հեռու են փախչում... երջանիկներից, թեկուզ մի՛ ակնթարթ երջանիկներից. «...դա կնոջ հագուրդի ճիչն էր, որից սարսափահար փայտոջիլները վախից կուչ եկան պատերին, հետո խուճապահար փախուստի դիմեցին դեպի հարևան բնակարանները և այլևս չվերադարձան այնտեղ»:

Պատահականությամբ թե օրինաչափորեն սկիզբ է դրվում «Նահատակված հրեշտակը» նկարի և նրա հերոսների՝ ճակատագրորեն ինքնահատուկ մի քանի հանդիպումների՝ ցուցահանելու նրանց կյանքն ու երջանկությունը՝ բազմադեմ ու խայտաբղետ: Դերանցի հերոսներից մեկը մտորում է. «Մարդը «Կարմիր գիրքն» է ստեղծել, որ պահպանվեն և իսպառ չվերանան կենդանիներ, ինչ-որ թռչուններ, որ թերևս անհայտ են ջունգլիներում: Ապա ի՞նչ կարող ենք ասել մարդու՝ վերացող տեսակի մասին»:

Կրկին կանայք ու ճակատագրեր: «Եվան կին էր ա՛յլ ճակատագրով», բայց մյուս կողմից էլ՝ «Աշխարհի ամենամեծ տխրությունն է, երբ կինն ուժեղ է դառնում»:

Մեկ այլ գործում՝ ապուրի գոլորշիների համարյա մոտիկ առկայություն, և համարյա երազանքին հասած երջանիկ կին, ինչին մղում է առաջին հերթին գրողի հավատը: Իսկ գրքում բոլոր հերոսներն անխտիր փայփայված են հեղինակի ձեռամբ: Եվ ինչպե՞ս է դողում գրողը յուրաքանչյուր կյանքի ու ճակատագրի համար:

«Ես լաց եմ լինում իմ կորցրած ներդաշնակության համար». անչափ անսպասելի ու միևնույն ժամանակ այնքան մարդկային երկու պատկեր է ներկայացնում գրողը՝ երկու տարբեր գործերում, որոնք տրամաբանորեն շարունակում են միմյանց՝ «Միայնակ գումարելիները» և «Քառակուսի մենակություն»՝ զուտ մաթեմատիկական բանաձևով, իսկ ապա՝ կյանքի բանաձևը՝ «Կի՛ն, երբե՛ք մի թույլ տուր, որ մարդը ավերի քո մեջ այն, ինչ ԵՐԿԻՆՔՆ է կառուցել...»:

Ժողովածուն ամբողջական համակարգում ներկայացնում է մի կողմից՝ կանացի նույնական ու տարբեր ճակատագրեր, մյուս կողմից՝ կյանքի հատակում ապրող մարդն է միայն իրեն հատուկ երջանկություններով ու դժբախտություններով, իսկ համապարփակ ընկալումներում առաջ են քաշվում արդիական հարցեր՝ բոլորը մարդկային և ապրված, բոլորը ընկալելի և գեղարվեստորեն ներդաշնակ:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

ՍԱՇԻ «Խելակորույս աշխարհը» Գ.ՅՈՒՄՐԻՈՒՄ

Սեպտեմբերի 30-ին Գյումրու «Բեռլին» հյուրերի տանը տեղի ունեցավ բանաստեղծուհի Սաշի 2-րդ՝ «Խելակորույս աշխարհ» գրքի շնորհանդեսը՝ մասնակցությամբ գրքի խմբագիր, գրականագետ, բան. գիտ. թեկն. Արմեն Ավանեսյանի, բանաստեղծ Խաչիկ Մանուկյանի, մի խումբ գրասերների՝ Շիրակի մարզային ու Գյումրու քաղաքային գրադարանների աշխատակիցների և ուսանողների:

Ուշագրավ ձևաչափով անցկացվեց հանդիպումը, որը գեղարվեստական կատարումներով ծաղկեցրին Երևանի կամերային թատրոնի դերասանուհի Քեթրին Մանասյանը և երգահան, կիթառահար լեդի Մարգոն: Նրանց կատարումները Սաշի բանաստեղծական արվեստի նոր և հետաքրքիր մեկնաբանություններ էին:

Գրքի խմբագիրը հանգամանորեն անդրադարձավ Սաշի գեղարվեստական աշխարհի առանձնահատկություններին՝ ընդգծելով. «....գրքի բանաստեղծություններից շատերը բացահայտում են արվեստի, պոեզիայի, պատմության ու մարդու, բանաստեղծի ճակատագրի և ստեղծագործական հոգեվիճակի նորանոր շերտեր, իսկ մի նախադասությամբ Սաշի պոեզիան կարելի է բնութագրել այսպես՝ վեհ և իմաստուն խոսքեր մարդու և աշխարհի մասին»:

Բանաստեղծ Խ. Մանուկյանն ըստ էության խոսեց Սաշի պոետիկայի մասին. «Կյանքը բանաստեղծելիս Սաշը նույն անկեղծն է՝ թրթռուն, արևոտ: Նա չի շրջանցել իր ժամանակը, և նրա բանաստեղծություններին բնորոշ են խաղացկուն ոճն ու զվարթանքը»:

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ, բանաստեղծ Անդրանիկ Կարապետյանը խոսեց բանաստեղծուհու ստեղծագործական աճի, նրա բանաստեղծությունների երաժշտականության և հեղինակի քաղաքացիական դիրքորոշման մասին:

Ռոզա Հովհաննիսյանն ասաց, որ Սաշը բանարվեստի գեղարվեստական իրագործմանը և պատկերավորությանը զարմանալիորեն հասել է արտահայտչական-պատկերավորման հնարների նվազագույն կիրառմամբ: Նրա հերոսը հեքիաթի հյուսվածքի մեջ է, ու իր հեքիաթում, ինչպես ինքն է ասում, հաղթել են պոետն ու գինին:

Բանաստեղծուհի Սոնա Անտոնյանը նշեց. «Սաշի «Խելակորույս աշխարհը» սև-սպիտակ աշխարհ է, որտեղ բոլորս ունենք մեր սիրո ժամանակը: Եթե խելակորույս է աշխարհը, ապա՝ սերն էլ, կարոտն էլ սպասումն էլ, բայց այդ խելակորույսը ես կվերագրեի մեր ապրած ժամանակին»:

Սրտի խոսք ասացին գրողներ Արմենուհի Մխիթարյանը և Մնացական Մուրադյանը, իսկ երիտասարդ բանաստեղծ, թարգմանիչ Կոնստանտին Շաքարյանը ռուսերեն թարգմանությամբ Սաշից կարդաց 2 գործ՝ անակնկալ մատուցելով հեղինակին:

Հանդիպման ավարտին երաժշտական կատարմամբ ներկաներին ողջունեց երիտասարդ

բանաստեղծ, երգահան Նարեկը:

Սաշը շնորհակալական ջերմիկ խոսքով և բանաստեղծությունների ընթերցմամբ ամփոփեց օրը՝ վկայելով, որ անկախ գնահատանքի բոլոր չափումներից իր ոգեխարիսխը եղել և մնում է կյանքի երգը:

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



«ԼՈՒՅՍ ԱՄԵՆԱՆԵՐ» գիրքը բանաստեղծուհի, արձակագիր, հեքիաթասաց Հրանուշի (Հրանուշ Սուքիասյանի) երկրորդ գիրքն է՝ նվիրված Արցախյան հերոսամարտերին՝ Ապրիլյանին և վերջին՝ 44-օրյա պատերազմին մասնակցած, հերոսացած զինվորների ու զինվորականների հիշատակին:

Հրանուշի բանաստեղծական, զգայուն սիրտը բաբախում է Հայրենիքի հետ կապված բոլոր իրադարձությունների ռիթմով: Հերոսների կյանքին ու սխրանքներին նվիրված այս փոքրիկ պատմություններով հեղինակը նպատակ ունի անմահացնելու այն հազարավորներից մի քանիսին գոնե, որ առանց վարանելու իրենց կյանքը տվեցին հանուն Հայրենիքի:

Պետք է նշեմ, որ եթե Հրանուշը գամված չլիներ հաշմանդամի սայլակին, անպայման անձամբ կմասնակցեր պատերազմներին, քանի որ հրաշալի հրաձիգ-նշանառու է, նաև քրոջ ու մոր պես կխնամեր մեր զինվորներին, կհերոսանար:

Տեսնելով բանաստեղծուհու կատարած աշխատանքի դժվարություններն ու ինքնամոռացումը՝ վստահաբար կարելի է ասել, որ նա հասնում է իր նպատակին, և սա էլ յուրօրինակ սխրանք է:

Մեր հատկապես այս վերջին պատերազմը հարյուրավոր լեգենդներ ունի: Հիշենք թեկուզ այն վեց տղաներին, որ պատերազմի ավարտից հետո պատսպարվել էին իրենք էլ չիմանալով, թե որտեղ, վաթսուն օր անց փրկվել էին Աստվածային հրաշքի և իրենց կամքի ուժով: Այս գրքում ամփոփված բոլոր հերոսները բացառիկ ծնունդներ են: Նրանցից յուրաքանչյուրը արտասովոր է իր նկարագրով, իր ընդունակություններով, շնորհներով, իր կարճ կյանքի ընթացքում՝ լուսավոր հետք թողնելու արժանավորությամբ:

Հեղինակը կարողացել է հերոսներին ներկայացնել ճշմարտությանը հավատարիմ մնալով, նրանց կյանքի լավագույն պահերի, ոգևորությունների, թռիչքների պատմությամբ:

Ընթերցողը ամեն մի հերոսի համար մեծ ափսոսանք զգալու հետ մեկտեղ հպարտության ու հայրենասիրության նոր զգացումներով է լցվում: Նրանցից յուրաքանչյուրը արդեն իսկ նվիրական անուն է մեր ողջ ազգի համար, ունի իր գույնը, զարմացնելու ուրույն հատկությունը, սիրելի է եղել և հիմա էլ սիրելի է իր միջավայրին, սիրելի է դառնում նաև բոլոր նրանց, ովքեր կարդում են այս գիրքը:

Ալիս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Գրող, հրապարակախոս

ԳՅՈՒՄՐՈՒ՝ Ս. ՄԵՐԿՈՒՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Փոքր ժամանակ մոտ 96-97- թվականներին, երբ ծնողներիս հետ զբոսնում էի Գյումրու քաղաքային «Գորկա» կոչվող զբոսայգում, միշտ նկատում էի նկարակալերով ու թղթերով հինձանից ավելի մեծահասակ երեխաների, որոնք բացօթյա պայմաններում նկարում էին: Հետաքրքրությամբ մոտենում, զննում ու հիանում էի նրանց նկարներով: Ինձ պատմում էին, որ նկարչական դպրոցից են ու էտյուդներ են անում: Ճիշտ է, ինքնուրույն շատ էի նկարում, բայց միշտ հոգուս խորքում երազել եմ լինել նրանցից մեկը: Ինձ բախտ չվիճակվեց դառնալ մերկուրովցի աշակերտ, բայց տարիներ հետո պատիվ ունեցա հաղորդակցվել մերկուրովցիների հետ:

Դպրոցի շեմից ներս մտնելով՝ հասկանում եմ, որ դարձել եմ հարյուրամյա պատմություն ունեցող կառույցի մի մասնիկ: Եվ ամեն անգամ, երբ Գյումրիում զրուցում եմ արվեստի ու արվեստագետների մասին, անհնար է չանդրադառնալ Գյումրու նկարչական դպրոցի մասին: Քիչ մարդ կա քաղաքում, որ գոնե մեկ անգամ չի լսել կամ առնչվել դպրոցին… Գրեթե բոլոր անցած-գնացած արվեստային իրադարձությունները, նկարիչների հուշերը կապված են այդ դպրոցի հետ:

Արդեն մեկ դար է, ինչ Ս.Դ. Մերկուրովի անվան նկարչական դպրոցը դարձել է Լենինական-Գյումրու արդի նկարչության նախնական օրրան: Դպրոցը քաղաքում զարգացրել է առանձնահատուկ ձևաոճային մտածողություն: Հիմնադրվել է 1921 թ. որպես նկարչական ստուդիա: 1936թ.-ից վերածվել է քառամյա դպրոցի: Ստուդիայի հիմնադիրներից է եղել 20-րդ դարի հայ գեղանկարիչ, գրաֆիկ Գևորգ Բրուտյանը: Հետաքրքիր է՝ հիմնադրվել է Ալեքսանդրապոլում, կայացել Լենինականում և շարունակում է զարգանալ Գյումրիում:

Հարկ է նշել, որ տարածաշրջանում որպես Գեղարվեստի պետական դպրոց եղել է միակը: «Նկարչական դպրոցը մեծ վարկանիշ ուներ, թեև ընդունվելը բարդ էր, իսկ դպրոցը՝ վճարովի»,- պատմում է արվեստագետ Գագիկ Մանուկյանը:

Սկզբնական շրջանում դպրոցը տեղակայված է եղել Սբ Նշան եկեղեցու մոտ գտնվող տան առաջին հարկում, այնուհետև տեղափոխվել է «Դալտոպլան» կոչվող դպրոցի տարածք: 40-ականներին զբաղեցրել է նախկին գիմնազիայի շենքի մի մասը: Հայերից բացի՝ դպրոցում դասավանդել են նաև ռուս նկարիչներ: Նրանցից մեկը Յուլիա Վերժբիցկայա էր, որի անունը սերտորեն կապված է Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի հետ:

Մարիամի ու Երանուհու նկարչական տաղանդն ի հայտ եկավ դպրոցական տարիքից: Ալեքսանդրապոլում նկարչական ստուդիա բացվելուն պես քույրերն անմիջապես ընդունվել են այնտեղ ուսուցանելու: Նկարչության ուսուցիչները, այդ թվում՝ Վերժբիցկայան, առաջիններից էր, որ նկատեց քույրերի շնորհը:

Ավելի ուշ տեղափոխվել է Մանկավարժական ինստիտուտի տարածք: «Ինստիտուտի շենքում դասարանները միջանցիկ էին դռներով, երբ որ ցուցահանդես էր լինում, դռները բացվում էին, ու կար մեծ սրահ, որտեղ էկրան էր կպած, ամեն շաբաթ նկարիչների մասին ֆիլմեր էին ցուցադրվում՝ Սուրիկովի, Վասնեցովի, Ռեպինի մասին, սլայդներ էին ցուցադրում, կամ Կինո «Հոկտեմբեր» էին տանում: Ավանդույթ էր ու դասավանդման մեթոդիկա: Հիշում եմ նկարչականի մեր ուսուցչուհուն՝ ռուս նկարչուհի Մոլևան էր, շատ հետաքրքիր և խիստ կին էր: Ինձ դաս չի տվել, բայց շատ լավ հիշում եմ»,- սիրով պատմում է Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնի տնօրեն Սուսաննա Մկրտչյանը:

Որոշ ժամանակ էլ տեղակայված է եղել Գյումրիում հայտնի մեծահարուստ Դրամփյաններին պատկանող շահութաբեր տանը, որը երկրաշարժից հետո դարձել էր կիսավեր: Չնայած արհավիրքին՝ գյումրեցի արվեստագետները ոչ միայն չեն լքել քաղաքը, այլ նաև երեխաներին շարունակել են արվեստ սովորեցնել: Դպրոցը ոչ մի օր պարապուրդի չի մատնվել նաև դժվար տարիներին: Անգամ կիսավեր շենքային պայմաններում երեխաները մեծ հաճույքով են հաճախել նկարչական: «Շենքը հին էր, վթարային, բայց չէր խանգարում, որ սիրով հաճախեինք: Պատերին կպած, փոքր-ինչ վախենալով՝ գնում էինք կրթվելու: Դպրոցն ուներ ջեռուցման խնդիր, բայց դա էլ չէր խանգարում, քանի որ ուսուցիչները ջերմ էին, միջավայրը՝ տրամադրող, աշակերտները՝ ձգտող»,- հիշում է նախկին շրջանավարտ, երիտասարդ արվեստագետ Գոհար Սաֆարյանը:

1989թ.-ից դասապրոցեսն անցկացվել է այգում տեղադրված ժամանակավոր տնակում: Գագիկ Մանուկյանը վկայում է՝ երկրաշարժից հետո տնօրենը Լաճիկյան Սամվելն էր, որն այգու մեջ դոմիկային դպրոց կազմակերպեց:

«Շնորհալի աշակերտներ շատ եմ ունեցել: Շատերը Երևան են ընդունվել, ու առանց կրկնուսույցի մոտ պարապելու, միանգամից ընդունվել են ինստիտուտ: Հիշում եմ՝ մի երեխա կար, որ անգամ ներկեր ու վրձիններ չուներ: Վրձնի պոչը սրել էր ու սրած պոչով մենակ սևով էնպիսի էտյուդներ էր անում, որ կարելի էր միանգամից որպես գրաֆիկական աշխատանք ներկայացնել ցուցահանդես: Երկրաշարժի տարիներին եղել է, որ ջուր չկար, և ձյուն ենք բերել հալեցրել, ջուր սարքել, որ կարողանայինք նկարել,- հավելում է արվեստագետ Աղունիկ Բերդիկյանը:

Դպրոցի հաջողություններում իր վաստակն ունի երեսուն տարի (1945-1977թ.թ.) դպրոցն անընդմեջ ղեկավարած Շանթ Սարգսյանը:

1977-1987 թվականներին նկարչական դպրոցի տնօրեն է նշանակվում Սերգեյ Միրզոյանը: Դասավանդվող առարկաներից եղել են գծանկարչությունը, գունանկարչությունը, քանդակը, դեկորատիվ կիրառական արվեստը, գոբելենը, կոմպոզիցիան: Անժելա Մանվելյանը դպրոցում հիմնեց գոբելենի դասարան:

Միրզոյանի դասարանում սովորել, այնուհետև դպրոցում դասավանդել է արվեստագետ Գագիկ Մանուկյանը: «Երկար տարիներ քանդակի դասարան չկար: Փոխտնօրեն լինելուս ժամանակ բացեցինք քանդակի դասարան: Աշխատում էինք այգու տնակային դպրոցում, և նոր էինք թոթափել երկրաշարժի արհավիրքը: Շատ լավ մթնոլորտ է եղել դպրոցում, էտյուդների էինք գնում, չնայած չհասանք բնորդ նկարելու: Ցուցահանդես-վաճառք կազմակերպեցինք ԱՄՆ-ում՝ տնակներում ապրող երեխաներին աջակցելու համար: Հետո տնօրեն եկավ Հովհաննես Գասպարյանը (Օիբոն)»: Գասպարյանը, բացի հետաքրքիր նկարիչ լինելուց, միշտ աչքի է ընկել իր հումորով:

Ներկայումս դպրոցը տեղակայված է Ջիվանու 78 հասցեում գտնվող, նախկին՝ Հ. Թումանյանի անվան գրադարանի շենքում: Տնօրենը երիտասարդ արվեստագետ Ժակլին Սարգսյանն արդեն տևական ժամանակ է, ինչ աշխատում է բարելավել շենքային պայմանները, ընդլայնել թե՛ տարածքը, թե՛ բարելավել կրթական պայմանները: Ավանդականին արդեն զուգահեռվում են ժամանակակից միտումները:

«Երբ մտնում եմ նկարչական, լրիվ ուրիշ աշխարհ է, ամեն անկյունը արվեստային է, թեյնիկը, որ կախած է առաստաղից, գդալները՝ փակցված դռանը, մի խոսքով՝ ամեն անկյուն: Այնտեղ ունեցա ուսուցիչներ, որոնք ընկերոջից չեն տարբերվում, ազատ ենք զգում մեզ, ինչպես մեր տանը»,- անկեղծանում է ներկայիս մերկուրովցի Վոլոդյա Քոչարյանը:

Հ.Գ. Դպրոցի մասին կարելի է խոսել էջերով, պատմությունները շատ են, հիշողությունները՝ բյուր, սակայն անհնար է հիշատակել բոլորին անհատապես:

Գայանե ՊԱՊԻԿՅԱՆ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային
մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Ռուբիկ Ղարիբյան» Ա/Ձ տպագրատանը
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 1 տպագրական մամուլ